ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կորպորատիվ հաճախորդի բանկային հաշվի

Հրապարակվել է 06.11.2026թ.

1. Բանկային հաշվի նկարագրություն, էական դրույթներ.

Բանկային հաշիվը բացվում է Կորպորատիվ հաճախորդի՝ այն է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի համար:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց քարտի բացման, սպասարկման և գործառնությունների իրականացման սակագներ՝

N	Անվանում/Սակագին ՀՀ դրամ	MIR բիզնես քարտ
1.	**Թողարկում**	
1.1.1	ՀՀ ռեզիդենտների համար	0 ՀՀ դրամ
1.1.2	ՀՀ ոչ ռեզիդենտների համար	50,000 ՀՀ դրամ
1.2	Քարտի շտապ թողարկում	11,000 ՀՀ դրամ
1.1.1	ՀՀ ռեզիդենտների համար	Գլխավոր քարտի թողարկման պայմաններին համապատասխան
2.	**Սպասարկում**	
2.1.1	Քարտի տարեկան սպասարկում	20,000 ՀՀ դրամ
2.1.2	Քարտի ամսեկան սպասարկում	2,000 ՀՀ դրամ
3.	**Նվազագույն մնացորդ**	0
4.	**Հաշվի մնացորդի վրա աշխատող տարեկան տոկոսադրույք**	
4.1	AMD/USD/EUR/RUB	Համաձայն «ՎՏԲ-Հայաստան բանկի կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացման և վարման» պայմաններին և սակագներին
5.	**Հաշվի համալրում**	
5.1	Հաշվին կանխիկի մուտքագրում Բանկի մասնաճյուղերում (AMD, USD, EUR, RUR)	Համաձայն «ՎՏԲ-Հայաստան բանկի կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացման և վարման» պայմաններին և սակագներին
5.2	Հաշվի համալրում Բանկի Cash in բանկոմատներով	Անվճար
5.3	Հաշվի համալրում վճարային տերմինալներով	Համաձայն գործարքի պահին գործող վճարային տերմինալներով կատարվող գործարքների համար սահմանված պայմանների և սակագների
5.4	«Мир» վճարային համակարգի բիզնես քարտի մեկանգամյա համալրման առավելագույն սահմանաչափը (կանխիկ/անկանխիկ)	399,000 ՀՀ դրամ
5.5	«Мир» վճարային համակարգի բիզնես քարտի օրական (24 ժամ) կանխիկ համալրումների հանրագումարի առավելագույն սահմանաչափը («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ և այլ բանկերի բանկոմատներում)	399,000 ՀՀ դրամ
5.6	«Мир» վճարային համակարգի բիզնես քարտի օրական (24 ժամ) կանխիկ համալրումների գործարքի առավելագույն քանակը	5 գործարք
6.	**Քարտով կանխիկ/անկանխիկ գործարքների իրականացում, այդ թվում POS-տերմինալներով**	
6.1	**Կանխիկ դրամական միջոցների տրամադրում**	
6.1.1	ՎՏԲ-Հայաստան Բանկի բանկոմատներում	0.1%
6.1.2	ՎՏԲ Խմբի բանկոմատներում	1.5%, նվազ. 500 ՀՀ դրամ
6.1.3	Այլ բանկերի բանկոմատներով և POS-տերմինալներով՝ «Мир» վճարային համակարգի քարտեր սպասարկող	1.5%, նվազ. 500 ՀՀ դրամ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար կանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք www.vtb.am հասցեով:

6.1.4	Հաշվից կանխիկացում Բանկի մասնաճյուղերում	Համաձայն «ՎՏԲ-Հայաստան բանկի կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացման և վարման» պայմաններին և սակագներին
6.1.5	ՌԴ ռուբլով կանխիկացում Բանկի բիվնես քարտից Բանկի POS-տերմինալներով	0.4%
6.2	**Հաշվից փոխանցումներ**	Համաձայն «ՎՏԲ-Հայաստան բանկի կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացման և վարման» պայմաններին և սակագներին
6.3	Անկանխիկ գործարքներ «Мир» վճարային համակարգի քարտեր սպասարկող առևտրային կետերում	0%
6.4	Քարտային հաշվով առավելագույն գործարքների իրականացման քանակը և սահմանաչափը/առանց քարտի կիրառման/	Առանց սահմանափակման
7.	**Քարտից քարտ փոխանցումներ**	
7.1	**Բանկի բանկոմատներով (ՎՏԲ-Հայաստան Բանկի MIR քարտերից Բանկի այլ քարտերին , ինչպես նաև և այլ MIR (տեղական և միջազգային) քարտերին**	
7.1.1	Փոխանցումներ Բանկի ներսում (AMD, USD, EUR, RUR)	Դեբետային քարտերին՝ 0.9%, մին 400 AMD
7.1.2	Փոխանցում այլ քարտերին (AMD)	Դեբետային քարտերին՝ 0.9%, մին 400 AMD
7.2	Բանկ-հաճախորդ համակարգով	Անվճար
8.	**Քարտից կանխիկացման սահմանաչափեր**	
8.1	Մեկ գործարքի կանխիկացման առավելագույն սահմանաչափը Բանկի բանկոմատներից	500,000 ՀՀ դրամ
8.2	1 օրվա ընթացքում կանխիկացման առավելագույն սահմանաչափ	3,000,000 ՀՀ դրամ
8.3	1 օրվա ընթացքում կանխիկացման գործարքների առավելագույն քանակ	10
8.4	Քարտից օրական կանխիկացման սահմանաչափի ավելացում (միանգամյա)	2000 ՀՀ դրամ
9.	**Լրացուցիչ պայմաններ (ներառյալ ԱԱՀ)**	
9.1	Քարտի թողարկում PIN կոդի պահպանմամբ (քարտի ժամկետը լրանալուց հետո), Բանկի քարտերի ավտոմատ թողարկման պայմաններին համապատասխանելու դեպքում	Անվճար
9.2	Քարտի վերաթողարկում կորստի, վնասման և երրորդ անձանց տվյալների հասանելի դառնալու դեպքում	3,000 ՀՀ դրամ
9.3	Նոր PIN-կոդի տրամադրում (նոր քարտ չի տրամադրվում)	1,500 ՀՀ դրամ
9.4	Տեղեկատվական բնույթի ծառայությունների, այդ թվում՝ քաղվածքների, տեղեկանքների, վճարման հանձնարարականների կրկնօրինակների, աուդիտորական հարցումների պատասխանների և լիազորագրերի տրամադրում	Համաձայն «ՎՏԲ-Հայաստան բանկի կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացման և վարման» պայմաններին և սակագներին
10.	**Քարտի բլոկավորում**	
10.1	Քարտի մուտքագրում/բացառում տեղական STOP-ցուցակ	Անվճար
11.	**Մնացորդի դիտում**	
11.1	ՎՏԲ-Հայաստան Բանկի բանկոմատներով	Անվճար
11.2	ՀՀ սահմաններից դուրս գտնվող բանկերի բանկոմատներում	250 ՀՀ դրամ
12.	**Քարտից հրաժարվելու տույժ**	1,500 ՀՀ դրամ
13.	**Քարտի գործողության ժամկետ (տարի)**	5
14.	**Quasi cash գործարքներ***	3%

1.1 Բանկային հաշիվը բացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:
1.2 Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:
1.3 Բանկային հաշվը բացվում է ՀՀ դրամով և այլ արժույթներով՝ անորոշ ժամկետով:
1.4 Հաշվետիրոջ դիմումի համաձայն Բանկային հաշվին կից կարող են տրամադրվել դեբետային քարտեր:
1.5 Քարտը համարվում է Բանկի սեփականությունը և Հաշվետիրոջն է տրամադրվում օգտագործման իրավունքով: Քարտի գործողության ժամկետը սահմանվում է5 տարի: Քարտերը տրամադրվում են Դիմումը լրացնելու պահից առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Քարտը ստանալու համար Քարտապանին պետք է անձամբ ներկայանալ Բանկ: Քարտը բացվում է «Мир» վճարային համակարգով: Քարտի սպասարկման տարածաշրջանը սահմանում է MIR վճարային համակարգը:
1.6 Քարտը ստանալուն պես Քարտապանը պետք է ստորագրի Քարտի դարձերեսին առկա ստորագրության համար նախատեսված դաշտում: Քարտային գործարքների անդորրագրերի վրա դրվող Քարտապանի

ստորագրությունը պետք է համապատասխանի Քարտի դարձերեսին առկա ստորագրությանը: Ստորագրության անհամապատասխանությունը կարող է հիմք հանդիսանալ Քարտի սպասարկումը մերժելու համար:
*
1.7 Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Քարտապանը պարտավոր է Քարտը վերադարձնել Բանկ, կամ ոչնչացնել Քարտը՝ մագնիսական երիվի երկայնքով կտրատելով մասերի:
1.8 Քարտապանը պարտավորվում է միջոցներ ձեռնարկել Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու նպատակով: Քարտի և գաղտնաբառի օգտագործման հետ կապված բոլոր տեսակի ռիսկերը կրում է Քարտապանը և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտի կամ գաղտնաբառի օգտագործման հետևանքով Ձեր կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է Բանկի մեղքով:
1.9 Բանկային/քարտային հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝
1) ընթացիկ գործառնությունների իրականացում, այդ թվում՝ դրամական միջոցների փոխանցումներ, անկանխիկ արտարժույթի փոխարկային գործառնություններ:
2) ժամկետային ավանդների հետ կապված գործառնությունների իրականացում:
3) Բանկում գործող վարկերի տրամադրման, մարման հետ կապված այլ գործառնությունների իրականացում:
4) Բանկային հաշվից թույլատրվում է կատարել անսահմանափակ անգամ մուտքագրումներ և ելքագրումներ:
*
*
1.10 Բանկը Բանկային/քարտային հաշվին դրամական միջոցների մուտքագրումն և ելքագրումն իրականացնում է 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում:
1) Բանկային հաշիվը բացվում է Իրավաբանական անձի ղեկավարի, լիազոր անձի ներկայությամբ՝ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ներկայացմամբ:
1.1. Բանկն իրականացնում է նաև հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնություններ: Հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման փոխարժեքը Բանկի կողմից սահմանվում է փոխարկման գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող Բանկի արժութային փոխանակման գործառնությունների փոխարժեքով: Փոխարկումը տեղի է ունենում՝
• գումարների փոխարկման դեպքում գումարը փոխարկվում և վերահաշվարկվում է գործարքի օրը Բանկի կողմից սահմանված անկանխիկ գործարքի փոխարժեքով,
• ժամը 20:00-ից հետո կատարված գործարքները Բանկի կողմից կատարվում են հաջորդ բանկային օրվա ընթացքում: VTB Online հավելվածի միջոցով փոխարկմամբ գործարքների համար, որոնք կատարվում են ընթացիկ օրվա ժամը 18:00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 09:30-ը, կատարվում են հաջորդ բանկային օրվա ընթացքում՝ Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: Գործարքի և Բանկի կողմից սահմանված փոխարժեքի միջև անհամապատասխանության դեպքում Բանկը կմերժի գործարքը:
• Քարտային հաշվով գործառնությունների, այդ թվում նաև՝ արտարժույթի փոխանակում պահանջող գործարքների, հաշվառման համար անհրաժեշտ գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում Բանկը կարող է, առանց Քարտապանի նախնական հավանության կամ հետագա համաձայնության, սահմանել քարտային հաշվի գծով գերածախս, արգելափակել քարտը՝ գանձելով գերածախսի գումարը, սակագներով սահմանված տոկոսը (առկայության դեպքում նաև տույժեր): Քարտը արգելափակումից կհանվի տոկոսի/տույժերի և/կամ գերածախսի վճարումից հետո:
2) **Ուշադրություն:**
Հայաստանում քարտերը ընդունվում և սպասարկվում են միայն Բանկի բանկոմատներում և POS տերմինալներում:
ՀՀ տարածքից դուրս և առցանց կայքերում քարտերը սպասարկվում են միայն արտասահմանյան առցանց հարթակներում, բանկոմատներում և POS-տերմինալներում, որոնք սպասարկում են MIR վճարային համակարգը
3) Հաշվետիրոջ կողմից հաշվով գործառնություններ չկատարելու դեպքում հաշվի պահպանման ծախսերը՝ ելնելով գործարք չկատարելու վաղեմությունից Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, առաջնահերթ անվիճելի անակցեպտ կարգով գանձվում են Հաճախորդի ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի

արտարժույթային այլ հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում:
1.11 Հաճախորդի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված գործարքների վերաբերյալ հարցման ծառայության վճարը գանձվում է Բանկի Սակագներում այդ նպատակով սահմանված միջնորդավճարների համաձայն:
1.12 Բանկն առաջարկում է նաև հեռահաղորդակցման միջոցներով (էլեկտրոնային միջոցներով) հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորություններ հեռավար սպասարկման բանկային տարբեր համակարգերի կիրառմամբ:
1.13 Բանկային հաշվի վրա հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի փոփոխման վերաբերյալ Բանկը Հաճախորդին տեղեկացնում է, վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ փոփոխման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ: Բանկի կողմից տեղեկությունը համարվում է Հաճախորդին տրամադրված, վերջինիս իր կողմից ընտրված ճանապարհով այն հասանելի դառնալու պահից:
1.14 Բանկն իրավունք ունի փակել Հաճախորդի հաշիվն առանց նախնական ծանուցման, եթե Հաճախորդի հաշվով 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն իրականացվել գործառնություններ, հաշվի մնացորդը զրոյական է, և եթե առկա է հաշվի սպասարկման պարտք, որը հաջորդող 12 (տասներկու) ամիսների ընթացքում չի կարող գանձվել հաշվին/ներին մնացորդի բացակայության պատճառով: Հաշիվների սպասարկման վճարները գանձելիս և հաշիվը փակելիս Բանկն առաջնորդվում է Պայմանագրում նշված սկզբունքներով:
1.15 Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել իր հաշիվը և/կամ Բանկային հաշվին կից տրամադրված Քարտը, եթե Հաճախորդն այլևս չի ցանկանում օգտվել Բանկի ծառայություններից և Բանկում չունի այլ հաշիվներ, ավանդներ, վարկեր, որոնք կապակցված են Հաճախորդի տվյալ Բանկային հաշվին: Բանկային հաշվին առկա դրամական միջոցների սահմաններում Բանկի կողմից Հաճախորդին կանխիկի տրամադրումն իրականացվում է Հաճախորդի պահանջած անվանական արժեքի դրամանիշներով՝ առկայության դեպքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Բանկում տվյալ պահին առկա դրամանիշներով: Վերջնահաշվարկի ժամանակ իրականացվում է (անհրաժեշտության դեպքում) Հաճախորդի բանկային հաշվի գծով տոկոսագումարների հաշվեգրում և վճարում: Հաշվի սպասարկման պայմանագրի դադարեցումից հետո Հաճախորդի անունով ստացված դրամական միջոցները վերադարձվումն են ուղարկողին:
1.16 Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի առկայության դեպքում):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների, կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ հաճախորդի վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար»):

2 Հաշվի վարման կարգը

2.1 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերի և դրանցում պարունակող տեղեկությունների արժանահավատության և հետագայում կատարված փոփոխությունների համար: Փոփոխությունների մասին Հաճախորդը պարտավոր է հայտնել Բանկին և ներկայացնել փոփոխված փաստաթղթերի բնօրինակները կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված կրկնօրինակները: Քանի դեռ Հաճախորդը փոփոխությունների մասին չի ներկայացրել պատշաճ փաստաթղթեր, Բանկն առաջնորդվում է Հաճախորդի նախկինում ներկայացրած առկա փաստաթղթերով: Հաճախորդը երաշխավորում է Բանկին հատուցել այն վնասները (ներառյալ բաց թողնված օգուտը), որոնք պատճառվել են Բանկին Հաճախորդի կողմից ծանուցելու պարտավորության խախտման հետևանքով:
2.2 Բանկային հաշվի նկարագրություն, էական դրույթներ
2.2.1 Բանկային հաշիվը բացվում է ՀՀ դրամով և արտարժույթով:
2.2.2 Բանկային հաշիվը բացվում է Պայմանագրի ստորագրման օրը:
2.2.3 Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:
2.3 Բանկային/քարտային հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝
2.3.1 դրամական միջոցների մուտքեր, ելքեր, փոխանցումներ,
2.3.2 անկանխիկ արտարժույթի փոխարկային գործառնություններ,
2.3.3 ժամկետային ավանդների բացման և մարման հետ կապված գործառնություններ,
2.3.4 Բանկում գործող վարկերի տրամադրման և մարման հետ կապված գործառնություններ,
2.3.5 այլ գործառնություններ:
2.3.6 Բանկային հաշվից թույլատրվում է կատարել անսահմանափակ անգամ լրացուցիչ մուտքագրումներ և ելքագրումներ:
2.4 Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի հանձնարարությունները և դուրս գրման այլ փաստաթղթերը Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ):
2.5 Այն դեպքում, երբ Հաճախորդի հաշիվներին առկա գումարները բավարար չեն վճարման հանձնարարականը/էլեկտրոնային վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, հայտը վերադարձվում է Հաճախորդին առանց կատարման, ընդ որում Բանկը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հանձնարարականը չկատարելու հետևանքով նրա կրած վնասների համար:
2.6 Սակագներով սահմանված վճարները, բացառությամբ 2.10 կետում նշված դեպքերի, առաջնահերթ գանձվում են ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի դոլարային հաշվից/ներից, այնուհետև եվրոյով հաշվից/ներից, այնուհետև ռուբլով հաշվից/ներից, իսկ վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի այլ արտարժույթային հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում: Ընդ որում՝ միևնույն արժույթով Հաշիվներից միջնորդավճարների գանձման նախապատվությունը տրվում է ավելի վաղ բացված Հաշվին:
2.7 Հաշիվներից կատարվող փոխանցումների, ինչպես նաև հաշվից կատարվող կանխիկ գործարքի դեպքում միջնորդավճարներն առաջնահերթ գանձվում են գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում 2.9 կետում նշված հերթականությամբ (եթե Հաճախորդի հանձնարարականներով/ էլեկտրոնային վճարման հանձնարարականներով այլ բան չի նշված):
2.8 Հաճախորդի կողմից հաշվի մնացորդի ճշտությունը կարող է վիճարկվել հաշվի քաղվածքը Բանկի կողմից ուղարկելու կամ տրամադրելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, հակառակ դեպքում քաղվածքը համարվում է հաստատված Հաճախորդի կողմից: Բանկի մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում ուղղումը կատարվում է 2 (երկու) բանկային օրվա ընթացքում:
2.9 Բանկային հաշվի գծով տարեկան տոկոսադրույքների փոփոխությունը կարող է կատարվել Բանկի կողմից՝

միակողմանիորեն: Բանկի կողմից բանկային հաշվին վճարվելիք տոկոսագումարների չափի նվազեցման դեպքում նոր տոկոսադրույքը սկսում է կիրառվել հաճախորդին տոկոսադրույքի նվազեցման մասին ծանուցման պահից 15 (տասնհինգ) օր հետո, եթե Բանկի հետ կնքված պայմանագրով այլ բան սահմանված չէ:

Քաղվածքների, տեղեկանքների, տեղեկատվական բնույթի փաստաթղթերի տրամադրում:

2.10 **Քաղվածքի տրամադրումը առաջին անգամ ցանկացած ժամանակահատվածի համար՝ անվճար:**

2.10.1 Հաճախորդն ինքն է ընտրում քաղվածքի ստացման եղանակն ու ժամկետները բանկային հաշվի բացման ժամանակ (առցանց Բանկում, փոստով, էլեկտրոնային փոստով և այլն):

2.10.2 Հաճախորդի Բանկային հաշվի վերաբերյալ տեղեկանքները Հաճախորդին տրամադրվում են ցանկացած մասնաճյուղում Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա: Հաճախորդի Բանկային հաշվի վերաբերյալ տեղեկանքի պատրաստման ժամկետը չի կարող գերազանցել Հաճախորդի բանավոր դիմումի օրվանից սկսած 3 (երեք) բանկային օրերը: Բանկային հաշվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրման դիմաց Բանկի Սակագներին համապատասխան գանձվում է կոմիսիոն վճար, որը գանձվում է (Հաճախորդի կողմից վճարվում է) նախքան Հաճախորդին Բանկային հաշվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրումը:

Բանկային/քարտային հաշվի վերաբերյալ տեղեկանքի և քաղվածքի տրամադրման սակագներ.

Բանկային հաշվի քաղվածքի տրամադրում ընթացիկ կամ նախորդ ամսվա համար (ներառյալ ավանդային և վարկային հաշիվները)	անվճար
Վճարման հանձնարարականի կատարումը հավաստող փաստաթղթի պատճենի տրամադրում	1.000 ՀՀ դրամ
մինչև 1 տարի վաղեմություն ունեցող առաջին անգամ քաղվածքի տրամադրման դեպքում	անվճար
մինչև 1 տարի վաղեմություն ունեցող կրկնակի քաղվածքի տրամադրման դեպքում	2.000 ՀՀ դրամ
1 տարի և ավել վաղեմություն ունեցող քաղվածքի տրամադրման դեպքում	5.000 ՀՀ դրամ
Դեսպանատների համար քաղվածքների տրամադրում հայերեն/ռուսերեն/անգլերեն լեզուներով	2.000 ՀՀ դրամ
Հաճախորդի պահանջով բանկային հաշվի քաղվածքների պատճենների տրամադրում 1 փաթեթով էլեկտրոնային փոստով	10.000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում հայերեն/ռուսերեն/անգլերեն լեզուներով	5.000 ՀՀ դրամ
Ոչ ստանդարտ տեղեկանքի տրամադրում	10.000 ՀՀ դրամ
Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում և տրամադրում	10.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր պաշտոնական հարցման համար
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ տիպային ձևաչափով լիազորագրի տրամադրում	2.000 ՀՀ դրամ

Բանկային քարտի նկարագրություն, էական դրույթներ

Բիվնես քարտը (այսուհետ՝ քարտ) բացվում է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից դիմում-պայմանագրի կնքման դեպքում և տրամադրվում է 3-5 աշխատանքային օրվա ընտացքում:

Քարտը բացվում է Պայմանագրի ստորագրման օրը: Պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով:

- Քարտի բացման համար նվազագույն մնացորդ սահմանված չէ:
- Քարտին կցվում է 4 արժույթի հաշիվ՝ ՀՀ ԴՐԱՄ, RUB, USD, EUR արժույթներով:
- Քարտն բացվում է MIR վճարային համակարգով: ՎՔ-ի սպասարկման տարածաշրջանը սահմանում է MIR վճարային համակարգը:

Քարտը ստանալուն պես Հաճախորդի կողմից քարտի տրամադրման պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ուղարկվում է ժամանակավոր PIN-ծածկագիր (բացառությամբ այն դեպքերի, երբ PIN-ծածկագիրը տրամադրվում է փակ ծրարով), որը կարելի է փոխել ինքնուրույնաբար՝ Բանկի ցանկացած բանկոմատում քարտի առաջին իսկ մուտքագրման պահին հետևյալ սկզբունքով.

- քարտը մուտքագրել Բանկի ցանկացած բանկոմատ,
- էկրանին մուտքագրել բջջային հեռախոսահամարին ստացված ժամանակավոր PIN-ծածկագիրը,
- ընտրել այլ գործարքներ/ծառայություններ,

• ընտրել PIN կոդի փոփոխություն,
• այնուհետև մուտքագրել իր կողմից ինքնուրույնաբար որոշված քառանիշ PIN-ծածկագիր,
• հաստատել PIN-ծածկագիրը և ավարտել գործարքը կամ իրականացնել բանկոմատով հասանելի այլ գործարք:
Քարտով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝
• կանխիկ և անկանխիկ եղանակով դրամական միջոցների մուտքեր և ելքեր,
• փոխանցումներ Բանկի քարտային և բանկային հաշիվների միջև,
• քարտից քարտ փոխանցումներ՝ ներբանկային, ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս,
• անկանխիկ արտարժույթի փոխարկային գործառնություններ,
• ապրանքների և ծառայությունների համար անկանխիկ վճարումներ (POS / VPOS եղակակներով),
• առցանց գործարքներ (MIR վճարային համակարգը սպասարկող կայքերում),
• այլ գործառնություններ՝ համաձայն Բանկում գործող ՎՔ-ի պայմանների և սակագների:
Քարտային գործարքների հաշվեգրման ընթացքում առաջնահերթության սկզբունքով դեբետագրվում է այն հաշիվը, որի արժույթով կատարվել է գործարքը: Տվյալ հաշվին գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում դեբետագրվում են մ նացած արժույթներով հաշիվները՝ Ձեր կողմից Պայմանագրով նշված հերթականությամբ (տվյալ հերթականությունը Ձեր կողմից չնշելու դեպքում, Բանկը կկիրառի հետևյալ հերթականությունը՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ, ՌԴ ռուբլի): Նման պարագայում գործարքներ հաշվառելիս Բանկը կիրառում ենք գործարքի հաշվեգրման օրվա ընթացքում Բանկի և MIR վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանած փոխարժեքները:
Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Բանկը վերաթողարկում է քարտը Հաճախորդի պահանջով՝ մասնաճյուղ դիմելու պարագայում:
Հաճախորդն իրավունք ունի գրավոր դիմել Բանկին՝ պահանջելով լուծել Պայմանագիրը և դադարեցնել քարտի հետագա սպասարկումը՝ միաժամանակ մարելով Բանկի նկատմամբ պարտավորությունները կամ ապահովելով առնվազն Բանկի նկատմամբ նշված քարտի գծով առկա պարտավորությունների գումարի չափով դրական մնացորդ: Հաճախորդի կողմից լրացրած դիմումը (Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան) ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի Քարտի գործողությունը՝ մարելով Բանկի հանդեպ Հաճախորդի պարտավորությունները Բանկում՝ Հաճախորդի հաշիվներին առկա գումարներից:
2.11.Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու նպատակով անհրաժեշտ է. Քարտը պահպանել ապահով վայրում, այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Քարտը չպահել էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ; ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին; հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում; չպատասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի դարձերեսին առկա եռանիշ թվերը (CVV2 կոդը); եթե ինտերնետի միջոցով գործարք կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվեք գործարքից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներում և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներում գործարքներ կատարելիս, ինչպես նաև, առևտրային կետերում ապրանքի/ծառայության դիմաց վճարելիս: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվել միայն վստահելի կայքերից; բանկոմատներով գործարքներ իրականացնելիս նախընտրել ՎՏԲ-Հայաստան Բանկ-ի բանկոմատները: Հետևել, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց; հետևել, որ POS-տերմինալներով անկանխիկ գործարքներ կատարելիս վճարումն իրականացվի Հաճախորդի ներկայությամբ և Քարտը դուրս չբերվի տեսադաշտից: Նախքան վճարման անդորրագիրը ստորագրելը՝ ստուգել դրա վրա նշված վճարման ենթակա գումարի ճշտությունը; օգտվել Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցում ներ ստանալու Բանկի SMS banking ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անճշտություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ:

Ինտերնետում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկն օգտագործում է «3D-Secure»/«Secure Code» ծառայությունը, որի համաձայն ինտերնետում՝ «3D-Secure»/«Secure Code» ապահովող կայքերում, քարտով վճարում կատարելիս պետք է մուտքագրել քարտի տրամադրման պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ստացած մեկանգամյա գաղտնաբառը: Բանկն իրավունք ունի մերժել ինտերնետում քարտով իրականացվող վճարումը, եթե Հաճախորդի կողմից ստորագրված քարտի տրամադրման պայմանագրում նշված չէ կամ առանց Բանկին ծանուցման փոխվել է պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարը, որի արդյունքում

- բջջային հեռախոսահամարին չի ուղարկվում «3D-Secure»/«Secure Code» ապահովող կայքերում վճարման իրականացման համար անհրաժեշտ մեկանգամյա գաղտնաբառը
- «3D-Secure»/«Secure Code» չապահովող կայքերում չի բացառվում երրորդ անձանց կողմից Հաճախորդի քարտի չլիազորված օգտագործման ռիսկը

SMS banking ծառայության սպասարկման սակագներ՝

SMS-banking ծառայության միացում և սպասարկում	199 * ՀՀ դրամ ամսական (ծառայությանը միացված յուրաքանչյուր հաշվի համար)

2.12 Քարտը բանկոմատի կողմից առգրավվելու դեպքում.
2.12.1 եթե քարտը առգրավվել է Բանկի մասնաճյուղի տարածքում տեղադրված բանկոմատից աշխատանքային ժամերին՝ ապա անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ տվյալ մասնաճյուղի պատասխանատու աշխատակցին և տեղում ստանալ քարտը, եթե չկա քարտը Բանկի կողմից չտրամադրելու որևէ պատճառ:
2.12.2 եթե քարտը առգրավվել է Բանկի բանկոմատի կողմից մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք վանգահարել 8787 հեռախոսահամարով:
2.12.3 եթե քարտը առգրավվել է այլ բանկի բանկոմատից, ապա Կոնտակտային կենտրոնի աշխատակիցը կապ է հաստատում Ձեզ հետ, ճշտում կատարում Ձեզ հարմար մասնաճյուղի վերաբերյալ, որից հետո անձը հաստատող փաստաթղթով վանգը ստանալուց 5 աշխատանքային օր հետո անհրաժեշտ է մոտենալ Ձեր կողմից նշված մասնաճյուղ և ստանալ քարտը, իսկ հարցերի դեպքում վանգահարել տվյալ բանկոմատի վրա նշված հեռախոսահամարով:
2.13 Քարտը բանկոմատի միջոցով առգրավվելու օրվանից 180 օրվա ընթացքում Հաճախորդի կողմից քարտը չստանալու դեպքում, Բանկն իրավունք ունի ոչնչացնել քարտը փակել հաշիվները, դրական մնացորդը փոխանցելով Բանկում առկա այլ հաշիվներին կամ Բանկի տարանցիկ հաշվին, որը ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ բացառությամբ քարտին տրամադրված վարկային գծի առկայության դեպքերի, որի պարագայում վարկային քարտն ու քարտային հաշիվները փակվում են միայն այն պարագայում, երբ տվ յալ Վարկային քարտին տրամադրված Վարկային գծի մասով չկան պարտավորություններ /տվյալ դեպքում Վարկային քարտին վարկային գծի տրամադրման պայմանգիրը համարում է լուծված/դադարած, իսկ վարկը ուղղվում է մարման/:Քարտի բլոկավորումը և ապաբլոկավորումը կարող է իրականացվել ինչպես Բանկի այնպես էլ Հաճախորդի նախաձեռնությամբ՝ ելնելով անվտանգության, իրավական կամ գործառնական հիմքերից՝

- Քարտապանը կարող է բլոկավորել քարտը՝ **8787 շուրջօրյա հեռախոսահամարով՝** գողանալու, կորստի, վնասելու և այլ դեպքերում:
- Քարտապանը կարող է ապաբլոկավորել քարտը՝ դիմելով Բանկի մասնաճյուղ:

2.14 Քարտի կորստի դեպքում Քարտապանը անմիջապես պետք է տեղյակ պահի Բանկին +(374 10) 56-07-08 հեռախոսահամարով կամ միասնական տեղեկատվական ծառայության 87-87 հեռախոսահամարով, տեղեկացման պահից 2 (երկու) օրվա ընթացքում Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի դիմում՝ Քարտի կորստի վերաբերյալ: Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո քարտն արգելափակվում է Քարտապանի կողմից նշված և սակագներով սահմանված տարբերակով: Ներկայանալով Բանկի ցանկացած մասնաճյուղ, անձը հաստատելուց հետո Քարտն արգելափակվում է առավելագույնը 30 րոպեի ընթացքում: Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերվելու դեպքում՝ Քարտապանը պետք է տեղեկացնի այդ մասին Բանկին: Քարտի գործողությունը կարող է վերականգնվել/արգելափակումից հանվել Սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո (առկայության դեպքում):

2.15 Քարտապանի կողմից քարտի կորստի կամ չվավերացված գործարքի մասին Բանկին չտեղեկացնելու ժամանակահատվածում կատարված գործարքների վնասի ռիսկը կրում է Քարտապանը, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվել է առանց քարտապանի նույնականացման (օրինակ՝ առանց 3D Secure կոդի կամ PIN-ի) կամ Բանկի անվտանգության համակարգի թերացման պատճառով:
Քարտապանի կողմից Բանկին տեղեկացնելուց և քարտի բլոկավորումից հետո իրականացված բոլոր չվավերացված գործարքների համար պատասխանատվությունը և վնասը ամբողջությամբ կրում է Բանկը:
Բանկը կրում է ամբողջական պատասխանատվություն Քարտապանի առջև այն վնասների համար, որոնք առաջացել են Բանկի աշխատակիցների մեղքով, համակարգային տեխնիկական սխալների կամ Բանկի կողմից քարտը ժամանակին չբլոկավորելու հետևանքով:
2.16 Բանկի կողմից թողարկած քարտերի քարտապանների Բանկի բանկոմատների կողմից չստացված գումարի բողոքարկման դիմումները պետք է ներկայացվեն Հաճախորդի կողմից գումարը չստանալու փաստը բացահայտելուց առավելագույնը 1 տարվա ընթացքում, նշված ժամկետից հետո ներկայացված դիմումը Բանկի կողմից ուսումնասիրման ենթակա չէ:*
2.17 Եթե քարտապանը համաձայն չէ կատարված գործարքի հետ (ներառյալ՝ սպասարկման մերժումը, ապրանքների չմատակարարումը կամ գործարքների գրանցամատյանում սխալ գումարի առկայությունը), քարտապանն իրավունք ունի գրավոր պահանջ ներկայացնել Բանկին: Ստացված պահանջի հիման վրա Բանկը սկսում է գումարի վերադարձի գործընթացը (chargeback)՝ համաձայն MIR վճարային համակարգի կանոնների և կարգավորումների: Վերլուծության հիման վրա Բանկը որոշում է՝ բավարարե՞լ Հաճախորդի պահանջը, թե՞ հիմնավորված կերպով մերժել վերադարձը: Բողոքը Բանկի Բողոքների Կենտրոնի կողմից ուսումնասիրվում, քննվում, պատասխան է պատրաստվում և ուղարկվում Բողոքի Բանկ մուտքագրվելուց ոչ ուշ, քան 10-րդ աշխատանքային օրը, իսկ Դիմումի դեպքում՝ ոչ ուշ քան 20-րդ աշխատանքային օրը, բացառությամբ միջազգային վճարային համակարգերի կողմից ուսումնասիրվող Բողոքները, որոնց պատասխանը տրամադրվում է մինչև 90 օր ժամկետում, իսկ արբիտրաժում քննվող գործերի դեպքում գործընթացը կարող է տևել մինչև 180 օր:

2.18 Քարտի սպասարկման համար վճարը գանձվում է քարտի ստացման հայտի ներկայացման պահին: Հետագայում, վճարման ամսական եղանակի ընտրության դեպքում, գանձվելով Հաճախորդի հաշվից յուրաքանչյուր հաջորդող օրացույցային ամսվա առաջին աշխատանքային օրը, իսկ տարեկան եղանակի ընտրության պարագայում՝ գանձվելով Հաճախորդի հաշվից յուրաքանչյուր հաջորդող օրացույցային տարվա առաջին ամսվա առաջին աշխատանքային օրը՝ քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում՝ առանց Հաճախորդի լրացուցիչ թույլատվության: Եթե հիմնական քարտային հաշվի մնացորդը պակաս է, քան քարտի սպասարկման սակագինը, չբավարարող գումարը գանձվում է «ՎՏԲ-Հայաստան Բանկում» առկա Հաճախորդի այլ հաշիվներից, իսկ արտարժույթային հաշիվների դեպքում՝ փոխանակելով տարադրամը ՀՀ դրամի՝ համաձայն գործարքի իրականացման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի:
2.19 Հաճախորդն իրավունք ունի հաղորդակցվել ֆինանսական կապամակերպության հետ իր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, վերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
2.20 Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ խզել հաշվի սպասարկման պայմանագիրը, եթե այդ հաշիվը կապված չէ Հաճախորդի՝ Բանկի առջև ունեցած պարտավորությունների հետ: Ստանալով հաճախորդի հանձնարարականը հաշվի նախատեսվող փակման ամսաթվի դրությամբ՝ Բանկը հաշվի դրամական միջոցները, դրամական միջոցների հաստատված մնացորդի վրա հաշվեգրված տոկոսները պարտավորվում է վճարել հաճախորդին (տոկոսագումարներ վճարելու Բանկի պարտավորության դեպքում): Բանկի նկատամամբ Հաճախորդի պարտքի առկայության դեպքում Հաճախորդի պարտքի մարման համար օգտագործվում է Հաճախորդի բանկային հաշվին առկա միջոցները: Եթե բանկային հաշվին առկա միջոցները բավարար չեն Հաճախորդի պարտքի կարգավորման համար, բանկի իրավասու աշխատակիցը Հաճախորդին հայտնում է վերջինիս պարտքի մարման նպատակով նրա հաշվին գումարի մուտքագրման անհրաժեշտության մասին: Հաշվի սպասարկման պայմանագրի դադարեցումից հետո Հաճախորդի անունով ստացված դրամական միջոցները վերադարձվում են ուղարկողին:

2.21 Բանկը առաջարկում է նաև հեռահաղորդակցման միջոցներով (էլեկտրոնային միջոցներով) հաշվում եղած դրամական մրջոցների տնօրինման հնարավորություններ ''Բանկ-հաճախորդ համակարգ՝ Ծառայությունները միայն՝ դիտելու՝ հնարավորությամբ ակտիվացնելու պարագայում տրամադրվում է անվճար հիմունքներով:

3. Վեճերի լուծման կարգը

3.1 Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

3.3 Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Հայտարարություն: Քարտը և քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Հայտարարություն: Առանց հաշվետիրոջ կարգադրության քարտից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է որի մասին հաշվետերը տեղեկացվում է Բանկի կողմից ուղարկվող SMS հաղորդագրության միջոցով: